

ՆԿԱՐԱԳԻՐ  
առաջարկվող ապրանքի ամբողջական

«Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ն ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/56 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար		Առաջարկվող ապրանքի				
		Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մոդելը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
2	Սրվակների լուսային ստուգման խցիկ	Apollo I Liquid Inspection Unit	Apollo	Apollo I	Adelphi	Սրվակների լուսային ստուգման խցիկ: Նախատեսված է որակի վերահսկման համար՝ ստերիլ պատրաստուկների ամպուլների, սրվակների, արյան պարկերի և շշերի մաքրությունն ու որակը տեսողականորեն ստուգելու, թափանցիկ լուծույթներում մասնիկների առկայությունը հայտնաբերելու նպատակով: Կիրառելի է դեղագործական լաբորատորիաներում, արյան բանկերում և մաքուր սենյակներում: Սարքը ունի կրկնակի պոլարիզացված լուսավորություն (մեջքի լուսատու + առջևի պոլարիզացիոն ֆիլտր)՝ մասնիկների բարձր տեսանելիության համար: Կառուցվածք և օպտիկա. չժանգոտվող պողպատից կոմպակտ կորպուս՝ հիգիենիկ մակերեսներով, կարգավորվող դիտման անկյուն՝ օպերատորի էրգոնոմիկ հարմարավետության համար, կարգավորվող խոշորացուցիչ՝ 1.7× մեծացում, LED-լուսատու դիֆուզորով՝ համաչափ լուսավորման համար: Լուսավորություն. կրկնակի պոլարիզացված սխեմա՝ մուգ ֆոնի վրա մասնիկների պայծառ կետային տեսք, առջևի փոխարկվող/վերացվող պոլարիզացիոն ֆիլտր՝ 147×117մմ: Չափեր. սարքի լայնություն՝ 320 մմ, բարձրություն՝ 420մմ: Էլեկտրամատակարարում. մուտքային լարում՝ 110–240 V AC, 50/60 Hz, մեկֆազ: Լրակազմ և պարագաներ. տեղադրում և մեկնարկ, աշխատակազմի ուսուցում տեղում, օգտագործման ձեռնարկ հայերեն կամ անգլերեն կամ ռուսերեն, սարքավորումը նոր է, չօգտագործված: Լրակազմը ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ սարքերը և պարագաները, որոնք անհրաժեշտ են լիարժեք գործունեության համար: Երաշխիքը՝ 24 ամիս:
3	Միկրոպլանշետային ֆոտոմետր	Microplate Reader BGMR-1000	BGMR-1000	BGMR-1000	Zhengzhou Laboao Instrument	Միկրոպլանշետային ֆոտոմետր (կարդացող և տպող): Նախատեսված է իմունոֆերմենտային անալիզների համար, ստանդարտ 96 ակոս (Лунки) ունեցող պլանշետի ակոսների մեջ գտնվող նյութի կլանման գործակիցը (օպտիկական խտությունը) չափելու համար: Ունի 8 ֆիլտր՝ 340-750 նմ

					Equipment Co., Ltd	միջակայքում ալիքի երկարությամբ, ինչը թույլ է տալիս օգտագործել տարբեր թեստ-համակարգեր: Չափման մեթոդ՝ լուսաչափական՝ մեկ կամ երկու ալիքի երկարությամբ: Թվային էկրանի առկայություն: Ներքին ծրագրակազմ: Լույսի աղբյուր՝ հալոգեն կամ լեդ լամպ: Չափման ժամանակ մեկալիքայինի դեպքում՝ 6 վրկ, երկալիքայինի դեպքում՝ 10վրկ.: Ինկուբացիայի ջերմաստիճանի տիրույթը՝ 25-85 °C միջակայքում: 8 հատանոց ստրիպեր: Ներկառուցված տպիչ: Էլեկտրոսնուցումը՝ 220Վ,50Հg: Լրակազմ և պարագաներ. Տեղադրում և մեկնարկ: Աշխատակազմի ուսուցում տեղում: Օգտագործման ձեռնարկ անգլերեն: Սարքավորումը նոր է, օգտագործված չէ: Լրակազմը ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ սարքերը և պարագաները, որոնք անհրաժեշտ են լիարժեք գործունեության համար: Երաշխիքը 24 ամիս: Որակի վկայականներ. 1. ISO13485,2. CE սերտիֆիկատ , MDR compliance MDR 2017/745 (formerly 93/42/EEC) ISO 13485 QMS LVD compliance (2014/35/EU) IEC 60601 series
--	--	--	--	--	--------------------	--

«Կոնցենն-Էներգոմա2» ՓԲԸ-ի տնօրեն՝ Բ. Թադևոսյան

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը)

Կ. Տ.